

ՍՆԱՆԿԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑ

Շուկայական տնտեսության ձևավորման պայմաններում ձեռնարկությունների անխուսափելի վերափոխումը ենթադրում է պարտապան ձեռնարկությունների և պարտատերերի, պարտապանների և վարկատուների միջև արդյունավետ փոխհարաբերությունների զարգացման համար հասարակության մեջ օրենսդրական նախապայմանների ստեղծումը: Այդ նախապայմաններից մեկը սնանկության մասին օրենսդրության առկայությունն է, որի իրացումը պետք է նպաստի սնանկության դեպքերի կանխարգելմանը, ձեռնարկատերերի միջև ֆինանսական փոխհարաբերությունների ամրոգջ համակարգի առողջացմանը, իսկ պարտապանի սնանկ ճանաչելու դեպքում՝ երկու կողմերի համար էլ սնանկության բացասական հետևանքները նվազագույնի հասցնելուն, քաղաքակիրթ ձևով բոլոր անհրաժեշտ ընթացակարգերի իրականացմանը: Մեր երկրում ներկայում բաժնետիրական ընկերությունների սնանկության գործընթացը կարգավորող հիմնական նորմատիվային փաստաթղթերն են «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի 25-ին), Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրքը (ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին), ինչպես նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ընդունվել է 2001 թվականի սեպտեմբերի 25-ին):

Տնտեսագիտական գրականությունից հայտնի է, որ ձեռնարկությունների սնանկացումը համալիր կազմակերպակիրավական ընթացակարգ է, որը կիրառվում է իրենց պարտավորությունները վճարելու կայուն անընդունակություն հանդես բերող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ¹: Սնանկությունը՝ արտադրությունը ֆիզիկապես կանգնել չթույլատրելու քաղաքակիրթ ձև է: Պարտապանի սնանկության նշանների առկայությունը որոշելու համար հաշվի է առնվում նրա դրամական պարտավորությունների չափը, այդ թվում փոխանցված ապրանքների համար պարտքերի չափը, բացառությամբ այն քաղաքացիների հանդեպ պարտավորությունների, որոնց առջև պարտապանը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին և առողջությանը վնաս պատճառելու, հեղինակային պարգևատրության վճարման պարտավորության, ինչպես նաև հիմնադիրների (մասնակիցների) հանդեպ իրավաբանական անձի պարտապանի նմանօրինակ մասնակցությունից բխող պարտավորությունների գծով²:

Տնտեսական դատարանի կողմից սնանկության մասին գործ կարող է հարուցվել այն դեպքում, երբ իրավաբանական անձ հանդիսացող պարտապանը թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հիմնհարյուրապատիկը գերազանցող անվիճելի վճարային

¹ Ա. Խ. Մարկոսյան, Տնտեսագիտություն բոլորի համար, էջ 77-102:

² Банкротство предприятия / под ред. Д.Ф. Рыкина. – М.: Приор, 2000.

պարտավորությունների 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է: Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե նա առարկում է հիշյալ պարտավորության դեմ: Պարտապանի դրամական պարտավորությունների չկատարման մասին տնտեսական դատարան դիմելու իրավունք ունեն պարտապանը, պարտատերը (վարկատուն) և դատախազը, իսկ պարտադիր վճարումների չիրականացման դեպքում տնտեսական դատարան կարող են դիմել նաև հարկային և այլ լիազորված մարմինները:

Պարտապանն իրավունք ունի իր անվճարունակության մասին հայցադիմումով դիմելու դատարան՝ սնանկության կանխատեսման դեպքում (այսինքն, տնտեսական վիճակի վատթարացման նշանների առկայության դեպքում, այնպիսի պարագաներում, որոնք օբյեկտիվորեն վկայում են, որ ընկերությունը որոշակի ժամկետից հետո չի կարող իրականացնել իր պարտավորությունները): Վերջինս հնարավորություն է ընձեռում պարտապանի նկատմամբ կիրառել վերականգնողական ընթացակարգեր: Որքան շուտ պարտապանը դիմի դատարան (ավելի տրամաբանական է արդյունքներ սպասել այն դեպքում, երբ տնտեսական վիճակը դեռ հնարավոր է կայունացնել), այնքան ավելի բարձր կլինի վերականգնողական ընթացակարգերի արդյունավետությունը:

Այսպիսով, սնանկության հիմքում ընկած է կանխավարկած հասկացությունը, համաձայն որի գույքային շրջանառության մասնակիցը (իրավաբանական անձը), որը երկարատև ժամանակահատվածում չի վճարում կոնտրագենտներից (պայմանադիրներից) ստացված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների դիմաց, ինչպես նաև չի վճարում հարկերը և այլ պարտադիր վճարումները, ի վիճակի չէ կատարել պարտատերերի (վարկատուների) դիմաց իր պարտավորությունները: Պարտապանը սնանկությունից խուսափելու համար պետք է կամ մարի իր պարտքերը, կամ դատարան ներկայացնի պարտատերերի, հարկային և այլ լիազորված պետական մարմինների պահանջների չհիմնավորված լինելու մասին ապացույցներ:

Բավարար հիմքերի առկայության դեպքում դատարանը սկսում է տվյալ գործի վարույթը (դատաքննությունը): Սնանկության նշանների բացակայության դեպքում դատարանը հրաժարվում է բավարարել պարտապանի սնանկության մասին համապատասխան հայց դիմումը: Սակայն նման նշանների (տվյալ պահին իր դրամական պարտքերը մարելու և հարկերը բյուջե և արտաբյուջետային ֆոնդեր վճարելու պարտապանի անկարողությունը) առկայությունը ամենևին էլ չի նշանակում, որ պարտապանը որպես սնանկ պետք է անպայման լուծարվի: Իրավաբանական անձ հանդիսացող պարտապանի լուծարման դեպքում կիրառվող մրցութային վարույթի ընթացակարգից բացի նրա նկատմամբ կարող են կիրառվել նաև այլ ընթացակարգեր:

Օրենքով կարող են նախատեսվել պարտապանի վճարունակության վերականգնմանը նպաստող մի շարք ընթացակարգեր, մասնավորապես.

- մինչդատական առողջացում՝ պարտապանին դրամական պարտքերը մարելու և վճարունակությունը վերականգնելու համար բավարար ֆինանսական օգնության տրամադրումը,
- պարտատերերի պահանջների բավարարման մորատորիում (կամ վճարման դադարեցման հայտարարում),
- գործընթացի ցանկացած փուլում հաշտության համաձայնագրի կնքման հնարավորություն,
- վերը նշված նպատակներին հասնելուն նպաստող այլ միջոցներ:

Սնանկության գործընթացը բաղկացած է մի շարք միմյանց փոխարինող ընթացակարգերից.

1. սնանկության ընթացակարգի հետազոտություն, որը (ընթացակարգը) ներմուծվում է դատարանի կողմից պարտապանին սնանկ ճանաչելու որոշման ընդունման պահից

(նպատակը՝ գույքի պահպանվածության ապահովում և պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության իրականացում),

2. արտաքին կառավարում՝ սնանկության ընթացակարգ, որը տնտեսական դատարանը պարտապանների ժողովի որոշման հիման վրա ներմուծում է պարտապանի վճարումակոթյունը վերականգնելու նպատակով արտաքին կառավարողին պարտապանի կառավարման լիազորությունների փոխանցման հետ մեկտեղ,
3. ֆինանսական առողջացում՝ սնանկության ընթացակարգ, որը կիրառվում է պարտապանի նկատմամբ, նրա վճարումակոթյունը վերականգնելու և պարտքերը պարտքերի մարման ժամանակացույցին համապատասխան մարելու նպատակով,
4. մրցութային վարույթ՝ սնանկության ընթացակարգ, որն իրականացվում է սահմանված կարգով պարտապանի գույքի վաճառքից գոյացած միջոցների հաշվին պարտատերերի պանջների համարժեք բավարարման նպատակով:

Պարտապանի վճարումակոթյան վերականգնմանը կամ լուծարման հիմնական ընթացակարգերին զուգահեռ նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ սնանկության հիմնական պատճառներին:

Տնտեսագիտության տեսության մեջ ընդունված է առանձնացնել սնանկության երեք հիմնական պատճառ¹: Առաջինը, ձեռնարկության անարդյունավետ կառավարումն է, որը կարող է արդյունք լինել գործունեության անհաջող (ոչ ճիշտ) շուկայական ռազմավարության, արտադրական, ֆինանսական, նյութական և աշխատանքային ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործման, և վերջապես, ձեռնարկության կառավարիչների անտեղյակության (անիրագրելության):

Սնանկության երկրորդ պատճառը թաքնված է սեփականատիրոջ այն թերությունների մեջ, որոնք հաճախ կապված են պարզ վերարտադրության ապահովման, իսկ ավելի հաճախ՝ ընդլայնված վերարտադրության համար անհրաժեշտ ներդրումային ռեսուրսների սակավության հետ: Այդպիսի սնանկությունը անվանվում է սեփականատիրոջ սնանկություն:

Եվ, վերջապես, սնանկության պատճառ կարող է դառնալ այն, որ ձեռնարկությունը թողարկում է ոչ մրցունակ արտադրանք (մատուցում է ծառայություն) հնացած սարքավորումներով կամ տեխնոլոգիայով, տեղաբաշխվածության պատճառով (բարձր են փոխադրման ծախսերը), կամ պարզապես շուկայում չի դիմանում մրցակցությանը: Եթե իրերի մասն վիճակը չի կարելի վերացնել ղեկավարների (կառավարիչների) փոխարինման կամ ներդրումների «ներարկման» ճանապարհով, ապա առկա է սնանկության այն տեսակը, որն ընդունված է անվանել արտադրության սնանկություն:

Սնանկության նշված ընդհանուր պատճառներից բացի Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեն սեփական, հայկական իրականությանը բնորոշ առանձնահատուկ պատճառներ, որոնք ձևավորվել են տնտեսության և նրա առանձին ոլորտների անցումային բնույթով՝ դեռևս ոչ ամբողջովին շուկայական պայմաններում²: Այդ պայմանները երբեմն վճարական դեր ունեն «սնանկացման» միջավայրի ձևավորման գործում: Դրանցից հիմնականներն են.

1. խորհրդային ժամանակներից մնացած և մեզ հասած «հսկա» ձեռնարկությունները, որոնք սեփականատիրոջը զրկում են շուկայական պայմաններում մանևրելու և ճկունություն հանդես բերելու հնարավորությունից,
2. պետական և մասնավորեցված ձեռնարկությունների «ծանրացումը» սոցիալական ոլորտի օբյեկտներով (ամենից առաջ, բնակարաններով, սոցիալ-մշակութային և հանգստի օբյեկտներով),

¹ Ա. Խ. Մարկոսյան, Տնտեսագիտություն բոլորի համար, էջ 78-79:

² Տե՛ս նույն տեղում, էջ 79:

3. բազմաթիվ ձեռնարկությունների կողմնորոշումը դեպի պետական կարիքների (նախ և առաջ, պաշտպանական) բավարարմանը, որոնք ներկայումս չեն ապահովվում պետական պատվերով (նախկինում եղած չափերով և զանգվածով):

Վերոնշյալ պատճառներով ընկերությունների՝ սեփական պարտքերը վճարելու անկարողությունը զանգվածային երևույթ են դառնում: Մեկ սնանկացող ընկերությունն «իր ետևից է տանում» նաև մյուսներին (հաճախ տնտեսության մույն ճյուղին պատկանող): Եվ, քանի որ սնանկ ճանաչված ընկերությունների վաճառվող արտադրամիջոցների զգալի մասն ունի ընդհանուր կիրառման նշանակություն և կարող է օգտագործվել տնտեսության ամենատարբեր ոլորտներում, ապա նոր սեփականատիրոջն անցնելու հետևանքով հաճախ փոխվում է այդ արտադրամիջոցների ճյուղային պատկանելությունը. այն ճյուղերից, որտեղ տեղի է ունենում արտադրության ծավալների անկում կամ լճացում (հենց այդ ճյուղերում են սնանկների հիմնական զանգվածները) գույքը տեղափոխվում է զարգացող այն ճյուղերը, որոնց արտադրանքի նկատմամբ կա պահանջարկ¹: Հետևաբար, ընկերության սնանկացումը տնտեսության կառուցվածքային վերակառուցման շուկայական գործիք է, որն ապահովում է արտադրական (ներդրումային) հոսքերի շարժը ճգնաժամի մեջ հայտնված ճյուղերից դեպի վերելքում գտնվող ոլորտները: Ստորև բերված աղյուսակ 1-ը արտացոլում է վնասով աշխատող կազմակերպությունների տեսակարար կշիռն ըստ տնտեսության առանձին ոլորտների:

Աղյուսակ 1

Վնասով աշխատող կազմակերպությունների տեսակարար կշիռն ըստ տնտեսության առանձին ոլորտների (2003-2007թթ.)²
(կազմակերպությունների ընդհանուր թվից,%)

Ոլորտներ	2003	2004	2005	2006	2007
Հանրագործական արդյունաբերություն	18.2	30.8	30.8	30.0	20.0
Մշակող արդյունաբերություն	38.5	28.0	30.3	31.1	31.1
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	61.9	45.8	37.5	21.9	22.6
Շինարարություն	24.2	12.9	19.4	12.9	10.1
Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	7.9	13.3	14.2	14.2	18.9
Տրանսպորտ և կապ	29.1	16.9	16.1	16.4	13.6
Ընդամենը	30.6	18.0	19.5	17.7	17.0

Ինչպես վկայում են վերոբերյալ աղյուսակ 1-ի տվյալները, 2007թ. 2003թ. համեմատությամբ վնասով աշխատող կազմակերպությունների տեսակարար կշիռն տեղի են ունեցել ինչպես նվազեցումներ, այնպես էլ ավելացումներ: Այսպես, մշակող արդյունաբերությունում վնասով աշխատող կազմակերպությունների տեսակարար կշիռն նվազել է 7.4%-ով, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ոլորտում՝ 39.3 %-ով, շինարարությունում՝ 14.1%-ով, տրանսպորտի և կապի ոլորտում՝ 15.5%-ով: Միաժամանակ ավելացել է վնասով աշխատող կազմակերպությունների տեսակարար կշիռը հանրագործական արդյունաբերությունում՝ 1.8%-ով, առևտրի, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտա-

¹ Ա. Խ. Մարկոսյան, Տնտեսագիտություն բոլորի համար, էջ 78:

² Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2007թ.:


գործման իրերի նորոգման ոլորում՝ 11%-ով: Ընդամենը վնասով աշխատող կազմակերպությունների տեսակարար կշիռն ըստ տնտեսության առանձին ոլորտների 2007թ. 2003թ. համեմատությամբ նվազել է 13.6%-ով, ինչը դրական երևույթ է, և միաժամանակ վկայում է ընկերությունների գործունեության որոշակի բարելավման մասին: Ասվածը վկայում է նաև այն մասին, որ չնայած որոշ ընկերությունների գործունեության բարելավմանը, այնուամենայնիվ, նրանց մի մասը, կախված իրենց ռազմավարական ծրագրերի կատարման առանձնահատկություններից, դեռ շարունակում են աշխատել վնասով, նպատակ ունենալով հետագայում իրականացնել արդյունավետ գնային քաղաքականություն, ինչպես նաև լուծել պետության համար կարևոր ռազմավարական և սոցիալական նշանակության խնդիրներ:

Միևնույն ժամանակ, չնայած վնասով աշխատող կազմակերպությունների տեսակարար կշռի նվազեցմանը, այնուամենայնիվ, մեր երկրում շարունակում է ավելանալ լուծարված իրավաբանական անձանց թիվը: Այդ մասին է վկայում ստորև բերված աղյուսակ 2-ը:

Աղյուսակ 2

Լուծարված իրավաբանական անձինք (այդ թվում ձեռնարկությունները և առանձնացված ստորաբաժանումները) (2002-2008թթ.) առ 01.01¹

Անվանումը	2002	2003	2004	2005	2006	2007	2008
Իրավաբանական անձինք (այդ թվում ձեռնարկությունները և առանձնացված ստորաբաժանումները	2854	3453	4097	5184	6750	8398	9674



Գծապատկեր 1. Լուծարված իրավաբանական անձինք (այդ թվում ձեռնարկությունները և առանձնացված ստորաբաժանումները) (2002-2008թթ.) առ 01.01²

Ինչպես վկայում են աղյուսակ 2-ի տվյալները, 2008թ. 2002թ. համեմատությամբ լուծարված իրավաբանական անձանց թիվն ավելացել է 6820-ով (կամ 2.4 անգամ): Այսպես, 2003թ. 2002թ. համեմատությամբ լուծարված իրավաբանական անձանց թիվն ավելացել է 599-ով, 2004թ. 2003թ. համեմատությամբ՝ 644-ով, 2005թ. 2004թ. համեմատությամբ՝ 1087-ով, 2006թ. 2005թ. համեմատությամբ՝ 1566-ով, 2007թ.-ին 2006թ. համեմատությամբ՝ 1648-ով, 2008թ. 2007թ.

¹ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003, 2004, 2005, 2006, 2007թթ. հունվար-դեկտեմբերին», ՀՀ ԱՎԾ:

² Նույն տեղում:

համեմատությամբ՝ 1276-ով: Իհարկե, լուծարված իրավաբանական անձանց քվաքանակի ավելացումը բացասական երևույթ է, սակայն, եթե այն տեղի է ունենում շուկայի սանիտարական գործառնության գործողության հետևանքով, ապա դա կարելի է համարել դրական երևույթ: Հասկանալի է, որ միայն արդյունավետ գործող ընկերությունների քվաքանակի ավելացմամբ է պայմանավորված մեր երկրի տնտեսության զարգացման ապագան:

Անդրադառնալով պետական գույքի մասնավորեցման ծրագրերում ընդգրկված և չմասնավորեցված առևտրային կազմակերպությունների սնանկացմանը, նշենք որ ի տարբերություն այլ ընկերությունների սնանկացման, այն ունի որոշակի առանձնահատկություններ: Այսպես, պետական գույքի մասնավորեցման ծրագրերում ընդգրկված և չմասնավորեցված առևտրային կազմակերպությունները չեն կարող սեփական սնանկությունը ճանաչելու նպատակով հայցադիմում ներկայացնել դատարան¹: Պետական գույքի մասնավորեցման ծրագրերում ընդգրկված և չմասնավորեցված առևտրային կազմակերպությունը սնանկ ճանաչելու մասին պարտատիրոջ (պարտատերերի) հայցադիմումը օրենքով սահմանված կարգով գրանցում է դատարանը և մեկ օրվա ընթացքում ծանուցում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ կցելով հայցադիմումի պատճենը: Դատարանը օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում պետական գույքի մասնավորեցման ծրագրերում ընդգրկված և դեռևս չմասնավորեցված առևտրային կազմակերպությունը պարտապահին պարտատիրոջ (պարտատերերի) հայցադիմումի հիման վրա սնանկ ճանաչելու վերաբերյալ գործն իր վարույթ ընդունելու մասին, եթե՝

ա) դատարանի ծանուցումը ստանալուց 60 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենքով սահմանված կարգով տվյալ առևտրային կազմակերպության մասնավորեցման մասին որոշում չի ընդունում,

բ) տվյալ առևտրային կազմակերպության մասնավորեցման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում ընդունելու պահից անցել է 150 օր,

գ) տվյալ առևտրային կազմակերպության՝ միջազգային մրցույթով մասնավորեցման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որոշում ընդունվելու դեպքում կազմակերպությունը միջազգային մրցույթով մասնավորեցվել է, ինչպես նաև մրցույթը չկայանալու պահից անցել է մեկ ամիս, եթե այդ ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը տվյալ առևտրային կազմակերպության մասնավորեցման մասին այլ որոշում չի ընդունել: Այս կարգը սահմանվել էր «Սնանկության մասին» նախկին օրենքի 98-րդ հոդվածով, սակայն նոր օրենքով այն հանվել է²:

Հասկանալի է, որ պետական գույքի մասնավորեցման ծրագրերում ընդգրկված և չմասնավորեցված առևտրային կազմակերպությունների սնանկացումը նույնպես ունի կարևոր տնտեսական նշանակություն և անշուշտ պետք է մտախոգի ողջ հասարակությանը: Ստորև բերված աղյուսակ 3-ը տվյալներ է պարունակում մասնավորեցման ծրագրերում ընդգրկված կազմակերպությունների լուծարման ընթացքի վերաբերյալ:


Ինչպես վկայում են աղյուսակ 3-ի տվյալները, 2008թ. 2002թ. համեմատությամբ մասնավորեցման ծրագրերում ընդգրկված և լուծարված առևտրային կազմակերպությունների թիվը նույնպես ավելացել է և 2008թ. կազմել է 98: Կարծում ենք, սա նույնպես դրական երևույթ է:

¹ Ա. Խ. Մարկոսյան, Տնտեսագիտություն բոլորի համար, էջ 101:

² www.arlis.am.

**Մասնավորեցման ծրագրերում ընդգրկված և լուծարված կազմակերպությունների թիվը
(2002-2008թթ.) առ 01.01¹**

Անվանումը	2002	2003	2004	2005	2006	2007	2008
Լուծարված ընկերությունները	36	43	49	56	62	82	98



Գծապատկեր 2. Մասնավորեցման ծրագրերում ընդգրկված և չմասնավորեցված կազմակերպությունների լուծարման ընթացքը (2002-2008թթ.) առ 01.01²

Անդրադառնալով ընկերությունների սնանկացմանը՝ կարևոր ենք համարում մասնակցել, որ ընկերության և բիզնեսի պահպանումը կարևոր սոցիալական խնդիր է և վերջինս պետք է մտահոգի ինչպես պարտապաններին, պարտատերերին (վարկատուներին), դատական, հարկային և այլ լիազորված մարմիններին, այնպես էլ ողջ հասարակությանը³։ Պարտապան ձեռնարկության համար օպտիմալ տարբերակ է հանդիսանում որպես բաժնետերեր ներգրավել իր արտադրանքի անմիջական մատակարարներին և սպառողներին։ Վերջինս հնարավորություն է ընձեռում ստեղծել տնտեսավարման փոխկապակցված արդյունավետ համակարգ, որտեղ մասնակիցները շահագրգռված են պահպանել համակարգի և նրա տարրերի անխախտելիությունը և ֆինանսական կայունությունը, քանի որ դա անմիջականորեն կապված է նրանց սեփական վիճակի հետ։ Տվյալ սկզբունքը լայնորեն կիրառվում է արևմուտքի մի շարք հաջողակ կորպորացիաների կողմից։

Այսպիսով, մենք անդրադարձանք սնանկացման բուն էությանը, սնանկացման հիմնական ընթացակարգերին, սնանկացման գործընթացը կարգավորող օրենսդրությանը, Հայաստանի Հանրապետությունում լուծարված իրավաբանական անձանց թվին, ինչպես մասնավորեցման ծրագրերում ընդգրկված և չմասնավորեցված կազմակերպությունների սնանկացման առանձնահատկություններին։ Այժմ փորձենք պարզել, թե ինչպես կարող է ընկերությունների սնանկացումը ազդել նրանց գործունեության բարելավման և, առհասարակ, մեր երկրի տնտեսության զարգացման վրա։

Հասկանալի է, որ սնանկացման գործընթացը, մախ և առաջ, հետապնդում է ընկերությանը լուծարվելուց փրկելու գերխնդիրներ, և միաժամանակ նպաստում է ընկերության գործունեության ընթացքում տեղ գտած սխալների և չարաշահումների բացահայտմանը և դրանց չեզոքացման ուղղությամբ կոնկրետ գործնական քայլերի ձեռնարկմանը։ Եվ այս պարագայում հնարավոր է

¹ www.armstat.am.

² www.armstat.am.

³ Աշոտ Մարկոսյան, Էլեոնորա Մաթևոսյան, Պետությունը և ձեռնարկատիրությունը, էջ 222-223:

39-աման ընկերության գործունեության վատթարացմանը նպաստող այնպիսի գործոնների և շարժառիթների բացահայտումը, որոնց մասին ընկերության ղեկավարությունը մինչ այդ նույնիսկ պատկերացում չուներ: Վերջինիս պատճառով ընկերությունները, նկատելով սնանկացման ճշմանը, պետք է անհապաղ դիմեն համապատասխան կառույցների օգնությանը, որը կարող է նպաստել ինչպես նրանց ֆինանսական առողջացմանը, այնպես էլ ներդրումային գրավչության բարձրացմանը: Իսկ այն դեպքերում, երբ իրավիճակը սնանկացման ընթացակարգերի իրականացման միջոցով, այնուամենայնիվ, փրկել չի հաջողվում տեղի է ունենում ընկերության սեփականատիրոջ փոփոխություն (վաճառքի միջոցով ընկերությունը անարդյունավետ սեփականատերերից անցնում է այլ սեփականատիրոջը), ինչի արդյունքում նույնպես հնարավոր է բարելավել ընկերության գործունեությունը: Այն դեպքերում, երբ չի հաջողվում ամբողջությամբ վաճառել ընկերությունը, վաճառվում է նրա գույքը: Հասկանալի է, որ այս դեպքում կարող է միաժամանակ տեղի ունենալ և՛ գույքի սեփականատիրոջ փոփոխություն, և՛ տնտեսության կառուցվածքային փոփոխություն: Այսպիսով, ոչ շահութաբեր ճյուղի անարդյունավետ սեփականատիրոջից գույքը անցնում է շահութաբեր ճյուղի տվյալ ժամանակահատվածում արդյունավետ համարվող սեփականատիրոջը: Այս պարագայում կարևոր է նաև հաշվի առնել «հավասարամեծ կապիտալները բերում են հավասարամեծ շահույթներ» հայտնի տնտեսագիտական ճշմարտությունը և երբեք չշտապել կարևոր կառավարչական որոշումներ կայացնելիս: Ինչպես տեսնում ենք, ընկերությունների սնանկացումը կարող է նաև որոշակի դրական դեր ունենալ մեր ընկերությունների գործունեության բարելավման գործում:

Եվ չնայած սնանկության վերոնշյալ դրական հետևանքներին, այնուամենայնիվ, ընկերությունները պետք է ջանք ու եռանդ չխնայեն, որպեսզի չհայտնվեն նման իրավիճակներում:

Այսպիսով, սնանկությունը՝ մեր ընկերությունների նորացման և վերափոխման օրինական մեխանիզմներից մեկն է: Այն մեխանիզմը, որը կարող է նպաստել մեր ընկերությունների գործունեության որոշակի բարելավմանը, և որպես դրա հետևանք՝ Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը:

ՍԱՄՎԵԼ ԻՍԿԱՆՂԱՐՅԱՆ

*ՀՀ պետական կառավարման
ակադեմիայի ասպիրանտ*

ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾԵՆԹԱՅԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԱՋՂՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Ներդրումների դերը կարևորվում է ինչպես զարգացող, այնպես էլ անցումային տնտեսություն ունեող բոլոր երկրներում, որտեղ այն դիտարկվում է անցումային փուլի հաղթահարման, ինչպես նաև զարգացման կարևորագույն ուղիներից մեկը: Անցումային տնտեսության ներդրումային միջավայրի ուսումնասիրումը այսօր դարձել է օբյեկտիվ անհրաժեշտություն և պետք է ընդունել, որ առանց տնտեսական խթանիչների համակարգային ուսումնասիրման որևէ լուրջ ներդրումային հոսքեր ակնկալել իրատեսական չէ: Տնտեսության անհամամասնական զարգացման պատճառների մեջ չպետք է փնտրել միայն օբյեկտիվ պատճառներ:

ՀՀ տնտեսությունում արտադրողականության բարձրացման արագ տեմպերը պահպանելու համար հրատապ խնդիրները է բարեփոխումների նոր հնարավորություններից օգտվելը, որոնք ուղղված են մրցակցային միջավայրի զարգացմանը, կապիտալի միջազգային շուկաների հետ ավելի սերտ ինտերգրմանը, ֆինանսական շուկաների խորացման և բարձր տեխնոլոգիաների ներդրման նպատակով նոր գիտելիքների յուրացման համար անհրաժեշտ պայմանների